

# { BnF



■  
■

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

∴ 1912.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'œuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).


165

19

**Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն Ը**

**Ե Ի**

**Օ Ր Մ Ա Ն Ե Ա Ն Ս Ր Բ Ա Զ Ա Ն**



**Խ ն ա յ ո ղ ա կ ան Տ պ տ ր ան**

**Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ի Ա**

**1912**



492 13749

Bibliothèque  
Aram Andonian

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԿԻՎՆԵՐԻՊԻԹԵԻՆԸ

Ե Ի

ՕՐՄԱՆԵԱՆ ԱՐԿԻՎԱՆ



BnFA 90 06140

L&A

2008-95313



Թէպէտեւ Եգիպտոսի Առաջնորդական վիճակը թափուր չէ այս պահուս եւ ազգային պաշտօնական շրջանակներու առջեւ, որչափ զիտենք, Առաջնորդական խնդիր մը գոյութիւն չունի, — զի ո՛չ Գեր. Աղաւնունի Սրբազան հրաժարած է եւ ո՛չ Ազգ. Գաւառական ժողովները անոր հրաժարականը պահանջելու ձեռնարկ մը ըրած են, — սակայն եւ այնպէս ժամանակէ մ'ի վեր թէ՛ Եգիպտոսի մամուլին եւ թէ՛ Կ. Պօլսոյ ազգային թերթերուն մէջ մերթ ընդ մերթ կը յուզուի Եգիպտոսի Առաջնորդական խնդիրը եւ ընտրելիներ կը ներկայացուին: Այս ընտրելիներուն մէջ ամենէն աւելի առաջ քշուածը Օրմանեան Սրբազանը ըլլալով դիւրին է մակաբերել թէ բոլոր խնդիրը կը կայանայ աւելի Ն. Սրբազնութեան Առաջնորդական աթոռ մը պատրաստելուն մէջ՝ քան թէ Աթոռի մը համար Առաջնորդ մը փրճառելուն: Ինչպէս կ'երեւի, աներեւոյթ ձեռք մը կը վարէ այս բռնագրօսիկ շարժումը եւ կը ջանայ աստիճանաբար Օրմանեան Սրբազանին ոտից կռուան պատրաստել Եգիպտոսի մէջ:

Գահիրէի «Լուսարեւ-Արեւ» եւ «Հոսանք» թերթերը, որոնք սովորաբար իրարու հակառակ ուղղութիւն ունին, կարծես դաշնակցած են ընդդէմ Աղաւնունի Եպիսկոպոսին, զոր ամէն առթիւ կը ջանան անուանարկել, եւ ի պաշտպանութիւն Օրմանեան Սրբազանին՝ զոր Եգիպտոսի Առաջնորդութեան միակ արժանաւոր ընտրելին

կը ներխայտցնեն: Ուշագրաւ է որ «Հուանք» իր առաջին թիւերէն մէկուն մէջ Օրմանեան Սրբազանի մեղադրականն ընելէ վե՛րջն է որ հիմա ելած է անոր առաջնորդական թեկնածութիւնը պաշտպանելու, կ'երեւի, բարձր տեղէ ստացուած հրահանգի մը համաձայն:

Նոյնչափ ուշագրաւ է «Լուսաբեր-Արեւ»ի ընթացքը, որ բաւական ժամանակ անուղղակի նամբաներով ընթանալէ, մերթ Օրմանեանը զովելէ ու մերթ պարտաւել; եւ զանազան ուրիշ թեկնածուներու շուրջ դեգերելէ վերջ, ա՛յլ հիմա բոլորովին Օրմանեանական դարձած է, մոռնալով երկար սարիներէ ի վեր նոյնիսկ «Լուսաբեր»ի եւ «Արեւ»ի (այն ստին աւանձին թերթեր) էջերուն մէջ անոր դէմ մղուած բուն պայքարը:

Այս վերջին թերթը իր 15 Օգոստոսի 1177 համարին մէջ «հանոյրով» կը հրատարակէ «Եգիպտահայ ազգային եւ մտաւորական շրջանակներու մէջ հանրածանօթ ազգայինի մը» Օրմանեան Սրբազանի հետ տեսակցութեան տպաւորութիւնները «վստահ որ նոյն հանոյրը ըմբռնանա՞ծ պիտի ըլլան նաեւ սիրելի ընթերցողները, Օրմանեան Սրբազանի անունը՝ Եգիպտահայոց մէջ այժմէական անուն մը ըլլալով ներկայիս, առաջնորդական խնդրին առիթով»:

«Լուսաբեր-Արեւ»ի վերոգրեալ տողերը կարդացողը այնպէս կը կարծէ թէ իր՝ ք Եգիպտոսի մէջ կը տիրէ զօրաւոր օրմանեանական հոսանք մը եւ թէ այժմէն ապահովապէս կարելի է նկատել Օրմանեան Սրբազանը Եգիպտոսի առաջնորդական ընտրելին, *par excellence!*

Կ'արժէ ուրեմն բունագրօսիկ կերպով յարուցուած այս խընդիրը քննել, թէ՛ Եգիպտահայերը յանկարծակիի բերելու համար պատրաստուելու վրայ եղող դաւ մը վիճեցնելու, եւ թէ նոյնիսկ նախազգուշացնելու համար Օրմանեան Սրբազանը, որ զո՛ւր տեղը անիրականալի երազներ չի սնուցանէ, խաբուելով մէկ քանիներու հիացիկ արտայայտութիւններէն, որոնք հեռի են Եգիպտահայոց հանրային կարծիքը ցոլացնելէ:

Բայց, քանի որ Եգիպտոսի առաջնորդական խնդիրը եւ Օրմանեան Սրբազանի քանտիտայութեան խնդիրը զուգընթացաբար կը յուզուին եւ այս վերջնոյն հաշուոյն աշխատողները — ամենայաջող պա-



րագային—իրենց նպատակին չեն կրնար հասնիլ՝ առանց նախապէս  
Եզիպտոսի աթոռը թափուր վիճակի մէջ ձգելու, մենք եւս նախ քան  
նենք թէ ի՛նչ է յարուցուած առաջնորդական խնդիրը:

\*  
\*  
\*

Աղաւնունի Սրբազանի կարողութիւններուն վրայ հիացողնե-  
րէն չենք թէիւ, սակայն եւ այնպէս այս պահուս՝ առաջնորդական  
խնդիր մը հանելը անհարկի եւ քիչ մ'ալ անպայել կը նկատենք: Կար-  
ծես Առաջնորդին ներկայութեանը խնդիր հանելը շատ դժուար եւ  
չըլլայիք բան մ'ըլլար, այս մարդիկը կ'ուզեն օգտուիլ օղափոխութեան  
համար անոր առժամեայ բացակայութենէն՝ զայն հարուածելու եւ  
անոր դէմ ժողովրդային շարժում առաջ բերելու համար: Հոս ակամայ  
կը յիշենք պարագայ մը, որ դժբաղդաբար շատ սխուր գաղափար մը  
կուտայ մեր բարքերուն վրայ: Օրին մէկը, Գահիրէի Թեմական ժողո-  
վը, չենք գիտեր ի՛նչ շարժառիթներէ դրդուած կամ Աղաւնունի Հօր ո՞ր  
բարեմասնութեան ի վարձատրութիւն, միաձայնութեամբ որոշում կը  
քուէարկէ զայն եպիսկոպոսացնելու եւ պարտ ու պատշաճ վկայագի-  
րը ստորագրելով կը դրկէ Աղեքսանդրիոյ Թեմական ժողովին: Այս վեր-  
ջինը Գահիրէի ժողովին միաձայն որոշման չի հակառակելու եւ երկու  
քաղաքներու պաշտօնական մարմիններուն միջեւ շփում առաջ չբերե-  
լու նկատողութեամբ՝ ինքն ալ կը համաձայնի յիշեալ որոշման, եւ  
Աղաւնունի Սրբազան՝ վկայագիր ի ձեռին կ'ուղեւորի Ս. Էջմիածին:  
Բայց ճի՛շդ այն միջոցին որ անոր եպիսկոպոսացման եւ դէպի Եզիպ-  
տոս ճամբայ ելնելուն հեռագիրը կը հասնի, Գահիրէի մէջ հակառաջ-  
նորդական խուլ շարժում մը կը սկսի նայն իսկ այն պաշտօնական շրջա-  
նակներէն որոնք առաջինը եղած էին իր եպիսկոպոսացման գաղա-  
փարը յղանալու եւ ջատագովելու: Այս տարօրինակ շարժումին գլխա-  
ւորները կը ջանան Աղեքսանդրիոյ մէջ ալ դժգոհութեան շարժում մը  
առաջ բերել ու զանազաններու այս ուղղութեամբ թելադրանքներ  
կ'ընեն, ի մէջ այլոց կը թելադրեն գէշ ընդունելութիւն ընել նորապսակ  
եպիսկոպոսին: Սակայն Աղեքսանդրիացիք, իրենց նախապէս առած  
ուղիղ կամ սխալ քայլին վրայ հաստատ եւ հետեւողական՝ իրենց  
զարմանքը կը յայտնեն այդ անտեղի եւ անմեկնելի շարժումին վրա:

եւ ո՛չ միայն կարեւորութիւն չեն տար եղած թելադրանքին, այլ ընդ-  
 հակառակը պարագային յարմար վայելուչ ընդունելութեամբ մը կը  
 պատուեն նախկոպոսացած Առաջնորդը. ասոր վրայ Գահիրէի շար-  
 ժումն ալ կը մարի: Անկէ ի վեր մէկ քանի տարիներ անցան, եւ ո՛չ ոք  
 մարէն անցուց առաջնորդական խնդիր մը մէջտեղ հանել, մինչեւ այս  
 վերջին ատեններս՝ երբ դարձեալ Գահիրէէն աղմուկը փրթաւ ճի՛շդ այն  
 պահուն որ Աղաւնունի Արքայան կը հանդերձէր իր հայրենիքը օդա-  
 փոխութեան երթալու՝ իր խանգարեալ առողջութիւնը դարմանելու  
 համար: Այս անգամուան շարժումը սակայն Գահիրէի մէջ աւելի ծա-  
 ւայ գտաւ շնորհիւ «Հուսարեր-Արեւ» ի եւ «Հոսանք» ի շարունակական  
 զրգուլթեանցը: Այս երկու թերթերու նորեկ խմբագիրները, որոնք  
 եզիպտահայ փափուկ խնդիրներով զբաղելու ունէ ձեռնհասութիւն  
 չունին, ոմանց աչքին հանոյանալու դիւրին միջոցը գտան Առաջ-  
 նորդական խնդիր մը արժարժելուն եւ Օրմանեան Արքայանի քանափ-  
 աայութիւնը մէջտեղ նետելուն մէջ: Այս երկու թերթերու վերջին հա-  
 մարները լեցուն են Աղաւնունի Արքայանի դէմ քննադատականներով  
 որոնցմէ ոմանք գործին լրջութիւնը կարանցնելու չափ ծիծաղելի են:  
 Նոյն թերթերը կը խօսին նաեւ՝ Աղաւնունի Արքայանի դէմ երկու  
 հանրագրութիւններու մասին, որոնց մէկը 500 է աւելի ստորագրութիւն-  
 ներով ծածկուած՝ արդէն մատուցուեր է Գահիրէի Քաղ. Ժողովին, իսկ  
 երկրորդը՝ «Հոսանք» ի մէջ հրատարակուած—եւ որուն խմբագրութեան  
 ոճը կը մատնէ արդէն հեղինակը եւ զայն ներշնչող աղբիւրը—նոր շր-  
 տաբերութեան հանուած է: Փութանքը եւ թէ՛ տուեալ ըլլալով մէկ  
 կողմէ Աղաւնունի Արքայանի սահմանափակ կարողութիւնները եւ  
 միւս կողմէ՝ մեր ժողովուրդին միամտութիւնը—որ չի թափանցեր այս  
 յարուցուած խնդրին սակ պահուած յետին միտքերուն—մենք ալ տա-  
 րա՛յոյս չունիսք որ այս հանրագիրն ալ կը ծածկուի բազմաթիւ ստո-  
 րագրութիւններով ու կը մատուցուի Գահիրէի Քաղ. Ժողովին: Բայց  
 խնդիր է թէ ինչ պիտի ընէ Քաղ. Ժողովը: Եւ ծիծաղելի է կարծել թէ  
 Քաղ. Ժողովը իրաւասութիւն ունի հեռագրել Առաջնորդին կամ Պատ-  
 րիարքարան՝ արգիլելու կամ զո՛նէ յետաձգելու համար Աղաւնունի  
 Արքայանի այստեղ վերադարձը: Ռբրան ատեն որ Գահիրէի եւ Աղեք-  
 սանդրիոյ Թեմական Ժողովները միասնաբար ի նիստ գումարուելով

Աղաւնունի Սրբազանի պաշտօնանկութիւնը չորոշեն եւ Ազգ. Կեդ. Վարչութեան հաւանութիւնը չըտանան, լիշեայր Եզիպտոսի Առաջնորդ է, հետեւաբար եւ պիտի գայ բազմիւ իր աթոռը: Չենք գիտեր, ի՞նչ պատահեցաւ որ, Աղաւնունին եօթը տարի հանդուրժող Գահիրէցին այսօր այնքան անհամբեր դարձեր է եւ չուզեր սպասել միշտ որ խնդիրը օրինական շաւղով ստանայ իր պտտշած լուծումը:

Վերոգրեալներէն ուշիմ բնթերցողը կրցաւ հասկնայ թէ՛ մեր նպատակը Աղաւնունի Սրբազանը պաշտպանել եւ անոր առաջնորդական պաշտօնավարութիւնը յաւերժացնել չէ՛: Արդարեւ, մենք ալ չենք ժխտեր յարուցուած այն առարկութիւնը թէ Եզիպտոսի պէս կտրելոր հայ գաղութ մը արժանի է աւելի բարձր կարողութիւններով օժտուած եւ աւելի գործունեայ Առաջնորդի մը քան ինչ որ է Աղաւնունի Սրբազան, եւ հետեւաբար կ'ընդունինք թէ՛ օր մը չէ օր մը՝ դէմ յանդիման պիտի գտնուինք այս առաջնորդական հարցին հետ եւ ստիպուած պիտի ըլլանք մեր քուէն տայ նոր Առաջնորդի մը համար: Չենք ժխտեր նաեւ դժուարութիւնները որոնց պիտի հանդիպինք գտնալու համար մեր եկեղեցականութեան մէջէն մէկը որ յարմարէր այս երկրի բազմադիմի պահանջներուն: Ու գաղափարն ըլլաւ այս կարգին մէջ, մենք ալ կ'ընդունինք որ, Օրմանեան Սրբազան իր լեզուագիտութեամբը եւ իր համբաւեալ կարողութիւններուն շնորհիւ, պիտի կարողանար հաւանօրէն Եզիպտահայոց մէկ մեծ մասին քուէները իր վրայ կեդրոնացնել, եթէ տարիներէ ի վեր Եզիպտահայ համակրութիւնները իրմէն ուժացուցած չըլլար, իր Պատրիարքութեան ժամանակ մասնաւորապէս Եզիպտահայ խնդիրներու հանդէպ բռնած անարդարանալի դիրքին պատճառով:

Բայց ներկայ հանգամանքներուն մէջ՝ մեզի համար էական կարեւորութիւն ունին սա երկու կէտերը.

Ա.— Ե՞րբ եւ ի՞նչպէս կարելի է հրաժարեցնել Աղաւնունի Սրբազանը:

Բ.— Ո՞վ պիտի ըլլայ անոր յաջորդը:

Այս երկու կէտերը չի լուսաբանուած եւ չորոշուած՝ ոեւէ խնդիր հանելը անտեղի եւ վնասակար է:

Բարերազգարար չենք զանուիր այնպիսի ստիպողական պարագաներու մէջ որոնք երբեմն բացառիկ եւ բուռն միջոցները կ'արդարացնեն: Ընհդակառակը ունէ անպատեհութիւն չկայ սպասելուն եւ յամբ ու կշռադատուած ուղղութեամբ մը գործելուն մէջ:

Այսպիսի լուրջ պայմաններու մէջ առաջ բերուած առաջնորդական խնդիր մը կարող է ուշադրութիւն գրաւել եւ համակրութեան արժանանայ: Անոնք որ այս պարագային մէջ հապնեպ եւ բուռն գործունեութիւն մը կը ջատագովեն, զուցէ անգիտակցարար՝ Եզիպտահալ Վարչական մարմինները եւ Գաւառական Ընդհ. ժողովը դժուարին եւ անկարելի կացութեան մը կը մատնեն: Առաջնորդի մը հրաժարեցման օրինական ձեւակերպութիւնները զահալիժարար չեն կրնար կատարուել, բայց միայն բացառիկ պարագաներու մէջ: Հանրային կարծիքը անշուշտ ազատ եւ կարող է համոզարտ եւ խաղաղ կերպով արտայայտուիլ Առաջնորդին դէմ: Բայց պէտք է թողուլ եւ ժամանակ տալ ազգային պաշտօնական մարմիններուն որ յարմար առթիւ եւ յարմարագոյն եղանակով լուծեն առաջնորդական խնդիրը: Այս պայմանն ա'լ աւելի անհրաժեշտ կը դառնայ, քանի որ խնդիրը այնպիսի Առաջնորդի մը վրայ է, որ իր երկարատեւ պաշտօնավարութեան միջոցին ունէ գեղձուձով ամբաստանուած չէ, այլ իրեն դէմ եղած միակ լուրջ մեղադրանքը կը կայանայ իր անբաւականութեան մէջ՝ Եզիպտոսի պէս կարելոր վիճակ մը արդիւնաւոր կերպով կաշտվարելու: Պարզ կենցաղագիտութիւնը կը պահանջէ որ Եզիպտոսի պաշտօնական մարմինները յետ խորհրդակցութեան փափուկ կերպով իրեն հասկցնեն թէ՛ ա'լ բաւական կը նկատեն իր պաշտօնավարութիւնը եւ զինքը համոզեն պատուաւոր կերպով իր հրաժարականը տալու:

Այս ամէնը վերոգրեալ առաջին կէտի մասին:

Գալով երկրորդ կէտին, արդարեւ խիստ կարելոր եւ անհրաժեշտ է որ երկու քաղաքներու պաշտօնական մարմինները կանխաւ իրարու հետ բանակցին եւ համաձայնին ապագայ առաջնորդական բնորոշիին մասին, եւ յետոյ միայն խորհին արդի Առաջնորդը հրաժարեցնելու միջոցներուն վրայ: Զի առաջնորդ մը հրաժարեցնելը համեմատօրէն դիւրին գործ է, բայց նոյնրան դիւրին չէ՛ յարմարադոյն յա-

չորդի մը ընտրութիւնը: Շատ անգամ Առաջնորդական խնդիրները հայ համայնքներու կուռածադիկն եղած են: Եզիպտահայերը կը յիշեն իրենց հին առաջնորդական վէճերը. բայց անցեալ վէճերը դեռ բան մը չեն հանդէպ այն պայքարին եւ երկպառակութեանց որոնց անխոհեմաբար դուռ կը բանան մէկ քանի անփորձ խմբագիրներ, երբ Ադաւնունի Արքազանը գահավէժ կերպով կուզեն հրաժարեցնել միայն եւ միմիայն տեղ բանալու համար Օրմանեան Արքազանին, եւ այս՝ որովհետեւ, խնչպէս կ'երեւի, մէկ քանի ազդեցիկ անձնաւորութիւններէ հրահանգ ստացած են այդ ուղղութեամբ:



Հիմա կարգն է ուրեմն որ խօսինք մասնաւորապէս Օրմանեան Արքազանի ներկայացուած քանախտայութեան վրայ եւ պարզենք թէ ի՞նչ հիմունքներով վնասակար, պառակտիչ եւ անիրականալի կը նկատենք Օրմանեանի ընտրութիւնը Եզիպտոսի առաջնորդական պաշտօնին:

Այն միջոցին որ այս ստղերը պիտի լրատարակուին, հաւանորէն Օրմանեան Արքազանի գործը վճռուած պիտի ըլլայ վերջապէս Կ. Պօլսոյ Ազգ. Ժողովէն: Ասիկա արդարութեան պարտք մ'է որ շատոնց պէտք էր կատարուած ըլլար Ազգին կողմէն: Դատելով Քրմնիչ Յանձնաժողովոյ եզրակացութենէն, հաւանականը այն է որ Ազգ. Ժողովը պիտի գտնէ Օրմանեան Արքազանը մեղադրելի բայց ո՛չ դատապարտելի: Յամենայն դէպս, տարակոյս չկայ որ Ն. Արքազնութիւնը պիտի ձերբազատուի այն արգելքէն որ դրուած էր իր վրայ յանիրաւի եւ ապօրէն կերպով, պարզապէս ամբոխավարութեան բռնութեան տակ, եւ պիտի վերստանա, իր ազատութիւնը քահանայազործելու, նաեւ պիտի ունենայ իրաւունք առաջնորդական պաշտօն վարելու եւ նոյնիսկ աւելի բարձր աթուներու ընտրելի նկատուելու: Այս ամէնուն դէմ մենք խնդիր չունինք: Բայց երբ խնդիրը զինք Եզիպտոսի Առաջնորդ ընտրելուն գայ, նախ՝ չենք կարծեր բնաւ որ Գաւառական Ընդհ. Ժողովին (որ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ առանձին Թեմական ժողովներուն համագումարն է) մեծամասնութիւնը նպաստաւոր տրամադրութիւն ունենայ դէպի Օրմանեան Արքազանը, որուն հա-

մակիրները այստեղ եզիպտոսի մէջ մասի վրայ կը համեռուին, որչափ ալ բարձրաստիճան անձնաւորութիւններ ըլլան անոնք: Չի, ինչպէս վերեւ ակնարկեցինք, Օրմանեան Սրբազան անցելոյն մէջ եզիպտացայոց նկատմամբ իր բռնած դիրքովը այստեղի հանրային կարծիքին առջեւ առյաւէտ դատապարտուած է:

Բայց համարելով պահ մը որ Գաւառական Ընդհ. ժողովի անդամոց մեծամասնութիւնը—անհեռատեղութեամբ մը որ շիտակը իրենցմէ չսպասուիր—Օրմանեան Սրբազանին տայ իր քուէն, այդ ճախորդ սրտումը ուրիշ բանի չպիտի յանգի, այլ միայն տարիներէ ի վեր բարեբաղդաբար զսպուած ու հանդարտած հանրային կիրքերու շրթաշաղկերծումին ու պոռթկումին, եւ Օրմանեան Սրբազան եզիպտոսի Առաջնորդական գահուն եւ իր միջեւ պիտի գտնէ ամբողջ եզիպտահայ ժողովուրդին անանցանելի պատնէշը: Ասիկա մարգարէութիւն մը չէ՝ այսչափ բան մը չտեսնելը, չկանխատեսելը ազգային—հոգեբանական ողբայի կարճատեսութիւն մը պիտի ըլլար եւ անզիտութիւն հասարակաց կարծիքի եւ անոր գորութեանը:

Այս անզիտութիւնը այլապէս աններելի պիտի ըլլար եզիպտոսի ղեկավարող շրջանակներուն համար, քանի որ անոնք մօտաւոր անցեալին մէջ քանիցս փորձը առած են հանրային կարծիքի անխորտակելի ուժին, եւ տեսած են թէ ի՛նչպէս եզիպտահայ ժողովուրդը, մասնաւորապէս Աղեքսանդրիացին, ըստ երեւոյթին խաղաղ, անհոգ եւ բաժանեալ, գիտցած է մէկ օրուան մէջ միահամուռ պոռթկալ ու ծառանալ իր հանրային խիղճը եւ իր իրաւունքները արհամարհել փորձողներուն դէմ:

Օրմանեան Սրբազանի թեկնածութիւնը առաջ քշողները մասնաւորապէս կ'անտեսեն թէ ի՛նչ հիմերու վրայ կեցած է այն խաղաղութիւնը եւ համերաշխութիւնը զոր բարեբաղդաբար մէկ քանի տարիներէ ի վեր կը վայելեն եզիպտահայերը եւ որուն կը պարտինք ազգային գործերու համեմատօրէն ակելի մարզաւան եւ զարգացուն վիճակը եւ եզիպտահայուն կենսունակութեան գեղեցիկ արտայայտութիւնները: Առանց այս խաղաղութեան եւ համերաշխութեան՝ ազգային կեանքի քնականոն ընթացքը պիտի խանգարուէր եւ մեծապէս պիտի

տուժէին այն ամէն բարեգործական եւ բարենպաստակ հաստատութիւնները որոնք այնքան արգաւանդ գեաին մը գտած են վերջին տարիներս եզրապտոսի մէջ:

Այս համերաշխութիւնը, կ'ըսենք, գոյացած է շնորհիւ զանազան դասակարգերու կամ տարրերու միջեւ կնքուած, թէեւ անգիր, դաշինքի մը, որուն մէջ իւրաքանչիւր կողմ բան մը զեղչած կամ զոհած է իր յաւակնութիւններէն: Մենծ-Աղաները լռելիեայն ստիպուած են ընդունիլ թէ իրենց փայփայած ամիրայական տիրապետութեան դարը անցած է այլեւս, եւ արամադրութիւն ցոյց տուած են օրէնքին ու մեծամասնութեան ծայնին հնազանդելու: Ազատական եւ արմատական տարրերն ալ, իրենց կարգին, ետ կեցած են իրենց աւելի վճռական պահանջներէն ու ազգային իշխանութեան հանդէպ ունին քիչ մ'աւելի յարգալիր վերաբերմունք մը—բան մը որ նոյնիսկ մայրաքաղաքի ազգային իշխանութիւններուն նախանձը պիտի շարժէր: Վա՛յ եթէ այս կամ այն կողմէն անզգոյշ եւ անխոհեմ քայլ մը խախտէ այս հաւասարակըշուութիւնը. — ամէն բան տակնուվրայ պիտի ըլլայ, եւ ապահովապէս զղջացողները անոնք պիտի ըլլան որոնք անգոսնեցին հանրային խիղճը եւ իրենց քմահաճոյքը ուզեցին անգամ մ'ալ պարտադրել հանրութեան:



Երկար եւ միանգամայն աւելորդ պիտի ըլլար բացատրել պատճառները այն հակակրութեան զոր ունին Եզրապտահայերը դէպի Օրմանեան Սրբազան: Պէտք պիտի ըլլար պատմականն ընել այն բուռն վեճերուն եւ խռովութիւններուն որոնց առիթ տուաւ Օրմանեան Սրբազան իր Պատրիարքութեան միջոցին՝ մէկ քանի դիրքի տէր անձերու կամայականութիւնները քաջալերելով եւ մասնաւորապէս Աղեքսանդրիոյ մէջ 7 տարի շարունակ պաշտօնի վրայ պահելով ապօրէն Խնամակալութիւն մը:

Անցեալը դեռ շատ թարմ է մտքերու մէջ՝ Օրմանեան Սրբազանին նպաստաւոր հոսանքի մը ստեղծումը անկարելի դարձնելուն համար: Մանաւանդ տուեալ ըլլալով Օրմանեան Սրբազանի անցելոյն բերանացի եւ գրաւոր յայտարարութիւնները թէ՛ ինք աւելի կարեւորութիւն կ'ընծայէ մէկ քանի բարձրաստիճան անձնաւորութիւններու

խօսքին՝ քան հարիւրաւոր ազգայիններու պահանջներուն եւ քաղաքատորազիւ հանրագրութիւններուն, զիւրին է մակաբեւել որ, եթէ երբեք Օրմանեան Սրբազան յատուցի ձեռք ձգել Եզիպտոսի առաջնորդութիւնը, ըստ իր վաղեմի սովորութեան, մէկ քանի երեւելիներ իր շուրջը հաւաքելով պիտի ջանայ վերահաստատել անցեալին բռնապետական սակաւապետութիւնը որ այնքան չարիքներու պատճառ եղաւ Եզիպտահայ գաղութին մէջ:

Ահա թէ ինչո՞ւ ամբողջ Եզիպտահայ հասարակութիւնը, քացի մէկ քանի անձնաւորութիւններէ, բոլորովին անհաշտ տրամադրութիւններ կը տածէ դէպի Օրմանեան Սրբազանը, եւ անոր առաջնորդական քանտիտայութեան խօսքն անգամ լսել չուզեր:

Օրմանեան Սրբազան եթէ կը փափարի իր նկատմամբ այստեղի հանրային կարծիքին մասին որոշ գաղափար ունենալ, թո՛ղ հաճի անցեալը վերյուշել քիչ մը. — լսած ենք որ յամաւ կարգացող մըն է եւ հիանալի յիշողութեամբ մ'օժտուած. — ու պիտի մտաբերէ եկեղեցիներուն մէջ իր անուան յիշատակութեան երկամեայ գաղարուճը, ամէն կաթողիկոսական ընտրութիւններու ժամանակ այստեղ ստեղծուած հակաօրմանեանական զօրաւոր հոսանքը, գումարուած միթիւնկները, յաջորդաբար ընտրուած կաթողիկոսական պատգամաւորներուն սրուած խիստ պատուէրը իրեն քուէ չտալու մասին, եւ մանաւանդ՝ «Փիւնիկ»ի, «Օրէնք»ի, «Ազատ Բեմ»ի, «Ազատ Խօսք»ի, «Արեւ»ի եւ «Լուսաբեր»ի անհատնում քննադատութիւնները՝ Եզիպտահայ խնդիրներու հանդէպ իր բռնած քաղաքականութեան դէմ, եւն. եւն.: Եւ այս հասարակութիւնն է որ յանկարծ հրաշքով մը իրեն հա՛հա՛յիր դարձած ըլլայ այսօր:

Այս հանգամանքներուն մէջ բոլորովին անտեղի է «Անցորդ» ստորագրող «հանրաժանօթ» Եզիպտահայ այցելուին հետեւեալ հարցումը եւ բոլորովին սխալ անոր մէջ պարունակուած հաւաստումը, զոր կրատորագծենք.

— Սրբազան, եթէ ձեզի Եզիպտոսի թեմը հովուելու հրաւիրեն, պիտի ընդունի՞ք, որովհետեւ ջերմ համակրանք մը կը «իւրեք այս միջոցիս դէպի ձեզ, եւ գաղութին միակ ընտելիս եմ»:

Գալով Օրմանեան Սրբազանի պատասխանին՝ «Ասիկա իմ որոշումէս աւելի կեղծոնի որոշումէն կախում ունի», — ասոր ալ մենք կը



պատասխաններ թի, Կեդրոնի որոշումէն առաջ եւ վերջը՝ եզրապահայ պաշտօնական մարմիններու որոշումէն եւ եզրապահայ հանրային կարծիքէն կախում ունի, ու ասոնց ալ բացասական ըլլալը բացարձակապէս ամէն տարակոյտէ վեր է:

Եթէ Օրմանեան Սրբազան գրական եւ եկեղեցական մեծահասոր աշխատութիւններ կը պատրաստէ, այդ մասին անկեղծօրէն կը շնորհաւորենք զինքը, եւ սուեալ ըլլալով իր անժխտելի ձեռնհասութիւնը, կը մաղթենք որ ռեւէ առաջնորդական կամ այլ մտահոգութիւններ չիզան ընդհատել իր բեղմնաւոր աշխատութիւնները:

Իսկ զալով եզրապահայ առաջնորդութեան այն բացառիկ կարեւորութեանը գոր և. Սրբազնութիւնը հանած է այնքան գեղեցիկ եւ բազմակողմանի կերպով ի վեր հանել, այդ ամէնը թելադրիչ կրնան ըլլալ իբր գործունէութեան ուղեցոյց աւելի երիտասարդ, աշխույժ եւ կոշտի Առաջնորդի մը, որպիսին, թէեւ դժուարաւ, բայց վերջ ի վերջոյ պիտի կրնայ անշուշտ գտնել Եզրապտտի հայութիւնը: Մինչ այն, կը մնանք ա՛յն Աղաւնունիով, որո՛ւն միայն արժանի գտած էր մեզ Օրմանեան Սրբազան իր Պատրիարքութեան օրով, անշուշտ այն յոյսը տածելով որ օր մը, Պատրիարքութենէ թեթեւալուն, պիտի կրնայ ի նպաստ իրեն շահագործել անոր ապիկարութիւնը, եւ զայ հանգչիլ Նեղոսի ափանց վրայ: Դժբաղդարար իրեն համար, ինկան այն կուռքերը որոնց կռթնած էր եւ որոնցմէ կախում ունէր իր երազներուն իրականացումը, Համիա՛ Կ. Պօլսոյ մէջ, եւ ամիրայական սակաւապետութիւնը՝ Եզրապտտ:

Վերջացնելով, կը կարծենք այս գրութեամբ աւելի ծառայութիւն մատուցած ըլլալ Օրմանեան Սրբազանին, քան իր կարծեցեալ բարեկամները, որոնցմէ մին ըլլալ կը թուի «Անցորդը»:

Յաւակնութիւն ունինք ըսելու որ մեր այս տեսութիւնները իրենց ամբողջութեամբ Եզրապտտահայերու ստուարագոյն մեծամասնութեան զգացումներուն հարազատ արտայայտութիւնն են: Այդ մասին վստահ կրնայ ըլլալ Օրմանեան Սրբազան եւ չխարուիլ վարձկան թերթերու եւ բերաններու սուտակասպաս յայտարարութիւններէն:

ԽՈՒՄԻ ՄԸ ԵՒԻՊՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆՆԵՐ







ԳԻՆ 1 ՂՐՇ. ՈՂՋ